ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
"ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ"
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

N 55 Ա/Ը « 30 » մայիսի 2012թ.

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», «ՄԱԹԵՄԱՏԻԿԱ», «ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ», «ՕՏԱՐ ԼԵԶՈՒ», «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ», «ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ». «ՔԻՄԻԱ», «ՖԻԶԻԿԱ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻ 2012Թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ.ապրիլի 26-ի <<Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության /ըստ բակալավրի կրթական ծրագրի/ կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 686-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 597-Ն որոշման հավելվածի 89-րդ և 90-րդ կետերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» առարկաներից 2012 թ. միասնական քննությունների նախնական 80 միավորանոց սանդղակը համապատասխանեցնել 20 միավորանոց սանդղակի՝ յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատելով 0.25 միավոր՝ բացառությամբ «Մաթեմատիկա» առարկայի թեստերի 45-50 և 69-80 ենթաառաջադրանքների, որոնց գնահատումը կատարվում է «Մաթեմատիկա» առարկայի պետական ավարտական և միասնական քննության 2011թ. ուղեցույցին համապատասխան: Ենթաառաջադրանքին ճիշտ պատասխանելու դեպքում դիմորդը ստանում է 0.25 միավոր, սխալ պատասխանելու դեպքում 45-50 ենթաառաջադրանքներից բաղկացած առաջադրանքից և 69-80 ենթաառաջադրանքներից բաղկացած առաջադրանքից հանվում է միավորը /0.25/, «չգիտեմ» պատասխանելու դեպքում դիմորդը ստանում է զրո /0/ միավոր: Եթե 45-50 և 69-80 ենթաառաջադրանքների միավորների գումարը զրո է կամ բացասական, ապա 45-50 և 69-80 ենթաառաջադրանքների գնահատականը համարվում է զրո:

2. Հաստատել «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» առարկաների միասնական քննությունների արդյունքների ճիշտ պատասխանների գնահատման սանդղակը՝ համաձայն հավելվածի:

3. Միասնական քննության նվազագույն դրական միավոր համարել 7.5 միավորը:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերապահում եմ ինձ:

Տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Բաղդասարյան

Հավելված
ԳԹԿ տնօրենի պաշտոնակատար Ա. Բաղդասարյանի 30.05.2012թ. թիվ 55 Ա/Ը հրամանի

Սանդղակ

«Հայոց լեզու և հայ գրականություն»,«Մաթեմատիկա», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» առարկաների 2012թ. միասնական քննությունների արդյունքների ճիշտ պատասխանների գնահատման

Նախնական միավորը (0-80)	Միավորը 20 միավորանոց համակարգում	Նախնական միավորը (0-80)	Միավորը 20 միավորանոց համակարգում	Նախնական միավորը (0-80)	Միավորը 20 միավորանոց համակարգում	Նախնական միավորը (0-80)	Միավորը 20 միավորանոց համակարգում
1	0,25	21	5,25	41	10,25	61	15,25
2	0,5	22	5,5	42	10,5	62	15,5
3	0,75	23	5,75	43	10,75	63	15,75
4	1	24	6	44	11	64	16
5	1,25	25	6,25	45	11,25	65	16,25
6	1,5	26	6,5	46	11,5	66	16,5
7	1,75	27	6,75	47	11,75	67	16,75
8	2	28	7	48	12	68	17
9	2,25	29	7,25	49	12,25	69	17,25
10	2,5	30	7,5	50	12,5	70	17,5
11	2,75	31	7,75	51	12,75	71	17,75
12	3	32	8	52	13	72	18
13	3,25	33	8,25	53	13,25	73	18,25
14	3,5	34	8,5	54	13,5	74	18,5
15	3,75	35	8,75	55	13,75	75	18,75
16	4	36	9	56	14	76	19
17	4,25	37	9,25	57	14,25	77	19,25
18	4,5	38	9,5	58	14,5	78	19,5
19	4,75	39	9,75	59	14,75	79	19,75
20	5	40	10	60	15	80	20